Պուշկին և Աբովյան փողոցների հատման մասում հյուրանոցային համալիրի կառուցման ներդրումային ծրագիր

Ծրագրի նկարագիրը

Հյուրանոցային համալիրը կառուցվում է Պուշկին և Աբովյան փողոցների հատման անկյունում (Աբովյան փողոց 3/4)՝ հինգ աստղանի հյուրանոցային պահանջներին համապատասխան: Համալիրը գտնվում է Երևանի պատմական կենտրոնում՝ նախկին Աստաֆյան՝ այժմյան Աբովյան փողոցի վրա: Նորակառույց համալիրի հորինվածքն Աբովյան փողոցի կողմից շեշտում և առանձնացնում է գոյություն ունեցող հուշարձան շենքը և կապ է հանդիսանում Հյուսիսային պողոտայի մաս կազմող բազմահարկ բնակելի շենքերի միջև:

Շենքի հորինվածքի էական առանցքը կազմում է առկա պատմանական հուշարձան շենքը, որի ճակատային մասը վերահավաքված է համարակալված ճակատային քարերով՝ իր նախկին տեսքով: Աբովյան փողոցի կողմից վերջինիս երկու կենտրոնական բացվածքները ծառայում են որպես հյուրանոցի գլխավոր մուտք:

Հյուրանոցային համալիրում գործելու են բարձրակարգ շուրջօրյա ռեստորաններ, սրճարաններ, լողավազան, սպա կենտրոն, մարզադահլիճ, շոգեբաղնիք, ինչպես նաև ընդարձակ կոնֆերենս դահլիճներ և ընթերցասրահ:

Տեխնիկական ցուցանիշներ	Շենքը բաղկացած է 12 վերգետնյա և 3 նկուղային հարկերից: Հյուրանոցն ունենանալու է լյուքս դասի 114 ընդարձակ հյուրասենյակներ:
Ծրագրի ժամկետներ	Շինարարական աշխատանքների ավարտը նախատեսված է 2017թ. երկրորդ կեսին:
Ծրագրի արժեքը	Իրացման և շինարարության արժեքը կազմում է շուրջ 30 մլն ԱՄՆ դոլար:
Ներդրումների ձևը և հիմնական պայմանները	Ծրագիրն իրականացվում է մասնավոր ներդրողի՝ «Ծուպանի» ՍՊ ընկերության կողմից:
Ներկա իրավիճակ	Շենքի շինարարությունը գտնվում է ավարտական փուլում: